№ 53 Ապրիլի 1 (13) 1882 Ապրիլի 1 (13) № 53

ՏԱՍՆՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

# ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ։
Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի
*Тифлисъ. Редакція «Мшакъ»*

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից)։

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Նամակ խմբագրին։ Ներքին լուրեր։—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Անգլիա։ Թիւրքիա։ Նամակ Թիւրքիայից։—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ։—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։— ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։—ՖԵԼԻԵՏՕՆ։

## ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Բագու, 22 մարտի

Մարդասիրական ընկերութեան խորհրդական ժողովը խնդրում է ձեզ յայտարարել ձեր յարգոյ թերթի մէջ հետեւեալ նամակը, ուղղած դէպի բոլոր հայ ժողովուրդը, որի նիւթական օգնութեանը կարօտում է ընկերութիւնը իր գործունէութեան ասպարիզում։

Ի նկատի ունենալով մի կողմից զանազան գիւղական հայ ուսումնարանների բազմաթիւ պահանջները, որով այդ դպրոցների հոգաբարձութիւնները անդադար դիմում են Բագուի Մարդասիրական ընկերութեան խորհրդին, միւս կողմից աչքի առաջ ունենալով, որ ընկերութիւնը իր բարձրագոյն հաստատեալ կանոնադրութեան համաձայն կարող է իր ծախսերը հիմնել իր մայր գումարից ստացած տոկոսիքների և մասնաւոր նուիրատուութեանց վրա, անկարող է գտնվում բաւականութիւն տալ այն վերոյիշեալ բոլորովին արդարացի պահանջներին։ Այս պատճառաւ ընկերութեան խորհրդական ժողովը դիմում է ընդհանուր հայ հասարակութեանը, վստահ լինելով, որ ազգային լուսաւորութեան և ընկերութեանս գաղափարին համակրողները չեն զլանայ իրանց կամաւոր նուիրատուութիւններով օգնել վերոյիշեալ նպատակի իրագործմանը։ Նուիրատուութիւնները կարող են ուղղվել դէպի օրագրիդ խմբագրութիւնը, նոյնպէս և Բագուի Մարդասիրական ընկերութեան խորհրդին։

Խորհրդական ժողովը հաւատի է, պ. խմբագիր, որ դուք չէք մերժի նորա այս խնդիրը, ունենալով աչքի առաջ ազգային կրթութեան և լուսաւորութեան կարիքները։

Նախագահ Գ. Թումայեան

### ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Շնորհակալութեամբ ստացանք հայոց դրքերի հրատարակութեան Թիֆլիսի ընկերութիւնից Քրիստաֆոր Շմիդտից թարգմանած մանկական երկու վէպեր «Գաղնուկ» և «Լուսատնիկ»։ Երկու վէպերն էլ պարունակված են մի փոքրիկ բրոշիւրի մէջ։ Այդ վէպերի թարգմանողը Նուարդն է։ Տպված է Մարտիրոսեանի տպարանում. գինը 25 կոպէկ է։

—

ԳՕՐՈՒՑ մեզ գրում են մարտի 24-ից, թէ այդտեղ շարունակվում է անձրևային եղանակը և մինչև այժմ ցրտերը չեն դադարում։ Քաղաքի փողոցները ցեխով են ծածկված և տեղ տեղ երևում է սառուց մեծ հաստութեամբ։ Քաղաքի կամուրջն էլ շարժվել է իր տեղից և սպառնում է մի քանի օրից յետոյ փուլ դալ։

—

Մեզ խնդրում են յայտնել որ մի հայ երիտասարդ ԲԱԳՈՒԻ մէջ ձեռնարկել է թարգմանելու հայերէն լեզուով Տուրգենիեվի «Дымъ» բոմանը։ Պարոնը խնդրում է որ ուրիշները նեղութիւն չը կրեն նոյն գրուածքը թարգմանելու։

—

ՂՈՒԲԱՅԻՑ մեզ գրում են։ «Թէ որ աստիճան նախապաշարված ու մոռոտապաշտ է մեր ամբոխը, ցոյց է տալիս հետեւեալ իրողութիւնը։ Խաչմաղ հայ գիւղում լինում են երկու շուչեցի եղբայրներ, որոնք այդտեղ առուտուր էին անում։ Նորերումս նրանցից մէնը հիւանդանում է։ Միւս եղբայրը հրաւիրում է նախ սափրիչին, որ հիւանդի թեքից արիւն հանէ,—դա առաջին և ամենանշանաւոր միջոց է համարվում մեր դալաքների բժշկականութեան մէջ,—յետոյ, տեսնելով որ հիւանդ եղբայրը այնու ամենայնիւ չէ առողջանում, հրաւիրում է թուրք մօլլային։ Տպէտ մօլլան, երկար դիպնօղա (հիւանդութեան որոշում) անելուց յետոյ, յայտնում է թէ հիւանդը պաշարված է դևերով և նրան պէտք է լաւ ապտակել ու ծեծել, որպէս զի սատանաները դուրս գան նրանից։ Հէնց որ մօլլան հեռանում է, անգութ եղբայրը վերցնում է ձեռքը մի մահակ և սկսում է այնպէս սաստիկ հարուածել իր հիւանդ եղբօրը, որ այս վերջինը ստացած հարուածների ազդեցութեան տակ հոգին աւանդում է։»

—

«Մշակի» № 51 մէջ տպած էր մի լուր որ մեր քաղաքի երկու երևելի գերմանացի բժշկներ Գ. (կամ Հ.) և Կր., բժշկելով մի յղի տիկնոջ, որ յղի էր վեց թէ եօթ ամսական երեխայով, այնքան տգէտ էին, որ չը կարողացան հասկանալ հասարակ յղութիւնը և բժշկում էին տիկնոջ չեղած հիւանդութիւններից, անտանելի օպէրացիաներ անելով նրան, որով և սպանեցին երեխային արգանդի մէջ։ Այժմ մեզ հարցնում են թէ ով է Կ.-եանց բժիշկը, որ վերջը կանչվելով հիւանդի մօտ, ազատեց հիւանդին հաստատ մահից, որին հասցրել էին նրան գերմանացի մօդային բժիշկները. դա բժշկապետ Գասպարեանցն է, որի ազդանուն առաջին տառը փոխանակ Գ.-եանց, սխալմամբ տպվել է մեր լրագրում Կ.-եանց։

—

ՎԵՐԻՆ-ԱԳՈՒԼԻՍԻՑ մեզ գրում են։ «Ագուլեցիները անասելի տանջանքներ կրելով, իրանց ժայռոտ տեղի վրա այդիներ բուսցրին։ Ագուլիսը կամ նրա բնակիչների գոնէ մեծ մասը, ապրում է թթի ծառերի արդիւնքով, որի տերևներով կերակրում են չերամի որթը, իսկ պտուղներից արաղ են քաշում։ Այժմ ակցիզային պաշտօնեաները մտել են գիւղի ամեն տան մէջ եղած մանր թէ մեծ պղնձներ, մինչև անգամ այնպիսի պղնձներ, որոնք տան տնտեսութեան համար էին գործ ածվում։ Մեր կանայք այլ ևս ազատ պղնձ չունեն որ ջուր տաքացնեն, լուացք անեն, կերակուր եփեն և այլն։ Պղնձից մաքրը հանելու իրաւունք ստանալու համար ագուլեցին պէտք է գնայ Հին-Նախիջևան։»

—

ԳԱՆՁԱԿԻՑ մեզ գրում են։ «Որովհետև Գանձակի բնակիչների մեծ մասը ապրում են իրանց այդիների բերքով, մանաւանդ հաղող ծախելով, այդ պատճառով տեղական պօլիցիական պաշտօնեաները ուզեցին անցեալ տարի այդի ունեցող քաղաքիս բոլոր տները դուխան համարել և այդ տեսակ բոլոր տների դռների վրա «դուխան» անունով նշանակ մեխել տալ։ Իսկ այդ տեսակ տներ մեծամասնութիւն են կազմում Գանձակում։ Հասարակութիւնը այդ մասով չարունակել նրանց նոյն անապին ռոճիկներ տալու։

* *

Լսում եմ որ շուտով հիմնվելու է Թիֆլիսում մի «Գիւղատնտեսական» ընկերութիւն, որի նպատակն է ամեն հայաբնակ քաղաքներում և գիւղերում հիմնել ճաշարաններ, որտեղ ընկերութեան անդամները իրաւունք կունենան ձրիապէս կերակրվել։

* *

Մ. Քաղաքից ինձ գրում են։ «Մեր քաղաքում այն աստիճան են բազմացել այլ և այլ ընկերութիւններ, որ այժմ իւրաքանչիւր հայ անհատը կազմում է արդէն մի ջոկ ընկերութիւն, և յոյս կայ որ շուտով իւրաքանչիւր հայ և իւրաքանչիւր հայուհի իրանց մէջ կամիտվին երեք, չորս ընկերութիւններ։» Այն ժամանակ ընկերութեան կանոնադրութիւնները, երևի այսպէս կը գրվին։

Յօդուած առաջին։ Իւրաքանչիւր անհատ իրաւունք ունի կազմել իր անձից մի, երկու, երեք և աւելի ընկերութիւններ։

Յօդուած երկրորդ։ Ամեն մարդ ինքն իրան ընտրում է ընկերութեան նախագահ, ձայների մեծամասնութեամբ։

Յօդուած երրորդ։ Նոյն մարդը կազմում է ընկերութեան ընդհանուր ժողովը։

Յօդուած չորրորդ։ Ընդհանուր ժողովը այս և այն հարցը քննելու համար իրաւունք ունի ընտրել իր միջից յանձնաժողով։

Յօդուած հինգերորդ։ Ընկերութեան նախագահը իրաւունք ունի տարին մի անգամ գումարել ընդհանուր ժողովը, որ կարող է գումարվել միայն այն ժամանակ երբ ինքը նախագահը ներկայ է գտնվում ժողովին, քանի որ ինքն է ներկայացնում ընդհանուր ժողովը։

Յօդուած վեցերորդ։ Մի և նոյն անձն ընկերութեան ընդհանուր ժողով է, նախագահ է, քարտուղար է, գանձապահ է, յանձնաժողով է և մանաժողով է։

Յօդուած եօթերորդ։ Եթէ մի և նոյն անձի մէջ ամփոփված են երկու, երեք այլ և այլ ընկերութիւններ, այդ բոլոր ընկերութիւնների տարեկան կանոնադրութեան դլխաւոր յօդուածն այն է, որ երկաթուղով ճանապարհորդել և նրանով ապրանքներ տեղափոխել իրաւունք կունենան միմիայն հայ-լուսաւորչականները։ Վագոնը նստելուց առաջ ամեն ճանապարհորդ պէտք է ցոյց տայ իր մեդալիկանը. եթէ հայ-լուսաւորչական է,—կարող է առմսակ վեր առնել և նստել վագոն, եթէ ոչ,—պէտք է ոտով դնայ։ Երկաթուղու վրա ծառայողներն էլ, ի հարկէ, բոլորն էլ պէտք է հայ-լուսաւորչականներ լինեն։

* *

Ինձ գրում են Շամախուց որ այդտեղի հայ-աւետարանականները սաստիկ թշնամի են հայութեան։ Նրանք իրանց գերմանացի են ասում, թէկն հայադէմ են, նրանք երբէք չեն խօսում հայերէն, չեն կարդում հայերէն, չեն հետաքրքրվում, մաղի չափ անզամ, հայութեան գործերով, ազգային խնդիրներով։ Ամենալաւ ապացոյց որ Շամախու հայ-աւետարանականները սաստիկ հայատեաց են և իրանց գերմանացի են ասում, այն է որ նրանք սաստիկ պաշտում են «Մշակ» լրագիրը։

* *

Ընթերցողները գիտեն արդէն որ երիտասարդների մի խումբ կարդալու է շուտով հրապարակական դասախօսութիւնների մի շարք յօդուտ ապագայ ուսուցչական ժողովի։ Այժմ լսում եմ որ իմ բարեկամներից մէկն էլ, որ բարձր ուսում ստացած մի մասնագէտ մանկավարժ է, դիտաւորութիւն ունի իր ծառայութիւնն էլ առաջարկել ուսուցչական ժողովի յանձնաժողովին և կամենում է կարդալ մի դասախօսութիւն հետեւեալ վերնագրով. «Դեռը և նրա կրթիչ ներդործութիւնը մատաղ սերունդի բարոյական, մտաւոր և նիւթական զարգացման վրա։»

* *

Մամուլի տակ է և շուտով լոյս կը տեսնի երկու մասնագէտ գերմանացի բժշկների մի շատ օգտաւէտ բժշկական գիրք. «Ինչպէս պէտք է որոշել կնոջ յղութիւնը» վերնագրով։ Մէջտեղը, որ առաջարկում են յարգելի բժշկները, շատ ուսանելի, պարզ և գեղեցիկ է։ Եթէ բժիշկը չը գիտէ որոշ կերպով թէ մի կին յղի է, պէտք է նրան ենթարկել ամեն տեսակ փորձերի, ամեն տեսակ օպէրացիաների։ Եթէ կինը կը մեռնի,—նշանակում է թէ յղի չէր, այլ ուրիշ, որ և է հիւանդութիւն ունէր, իսկ եթէ կը վիժի մեռած երեխային,—նշանակում է թէ յղի էր։

* *

Որովհետև յայտնի է աստղաբաշխութիւնից թէ լուսնի վրա այլ ևս ոչ օդ կայ, ոչ ջուր, ոչ բնակութիւն, մի խօսքով որ լուսինը շատ ժամանակ է արդէն որ անապատ, ամայի և աւերակ է դարձել,—այդ պատճառով իմ ծանօթներից մէնը այն ճիշդ և հանճարեղ մտքի է եկել, որ երևի լուսինը մի ժամանակ Հայաստան է եղել և նրա վրա պէտք է որ մնացած լինեն հին հայոց արձաններ, սեպագիր և ուրիշ ձև արձանագրութիւններով։ Եւ ահա իմ ծանօթս կազմել է մի մեծ ընկերութիւն, տաս ռուբլ անդամական բաժանորդագրութեամբ, լուսնի վրա ուսումնական արշաւանք անելու դիտաւորութեամբ։ Քանի որ լուսինը ամբողջութեամբ աւերակ է, արշաւանքի դլխաւոր անդամը պէտք է լինի աւերակների նկարող ֆոտոդրաֆ Քիւրքճեանը, նոյնպէս կը մասնակցեն արշաւանքին հնագէտ պ. Երիցեան և ուրիշ օդային հայ գրողներ։ Որովհետև յոյս չը կայ թէ այդ արշաւանքին կը մասնակցեն Մխիթարեան ուխտի ուսումնական միաբանները, կամ այնպիսի անձինք, ինչպէս Լեմին, Պատկանեան և այլն, այդ պատճառով նրանց տեղը, լուսինը Կանօպրաֆիական, հնագիտական, աշխարհագրական, պատմական, քաղաքական, տնտեսական, լեզուագիտական, մանկավարժական, հոգերանական, տրամաբանական և այլ ական տեսակէտներից նկարագրելու համար հրաւիրվում է Էջմիածնի ճեմարանի դիտական ռէկտոր պ. Արշակ Նահապետեանը իր պրոֆէսորների ամբողջ խումբով։ Ասում են որ Մանկունին էլ շատ ուրախ կը լինի այդ բոլոր պարոններից աղատվելու և Էջմիածնից դէպի լուսինը նրանց տեղափոխվելը տեսնելու, քանի որ դիտէ թէ հետեւեալ տարին այլ ևս չի կարողանայ նրանց պահելու ճեմարանում, նիւթական միջոցներ չունենալով չարունակել նրանց նոյն անապին ռոճիկներ տալու։

* *

Լսում եմ որ շուտով հիմնվելու է Թիֆլիսում մի «Գիւղատնտեսական» ընկերութիւն, որի նպատակն է ամեն հայաբնակ քաղաքներում և գիւղերում հիմնել ճաշարաններ, որտեղ ընկերութեան անդամները իրաւունք կունենան ձրիապէս կերակրվել։

* *

Մ. Քաղաքից ինձ գրում են։ «Մեր քաղաքում այն աստիճան են բազմացել այլ և այլ ընկերութիւններ, որ այժմ իւրաքանչիւր հայ անհատը կազմում է արդէն մի ջոկ ընկերութիւն, և յոյս կայ որ շուտով իւրաքանչիւր հայ և իւրաքանչիւր հայուհի իրանց մէջ կամիտվին երեք, չորս ընկերութիւններ։» Այն ժամանակ ընկերութեան կանոնադրութիւնները, երևի այսպէս կը գրվին։

Յօդուած առաջին։ Իւրաքանչիւր անհատ իրաւունք ունի կազմել իր անձից մի, երկու, երեք և աւելի ընկերութիւններ։

Յօդուած երկրորդ։ Ամեն մարդ ինքն իրան ընտրում է ընկերութեան նախագահ, ձայների մեծամասնութեամբ։

Յօդուած երրորդ։ Նոյն մարդը կազմում է ընկերութեան ընդհանուր ժողովը։

Յօդուած չորրորդ։ Ընդհանուր ժողովը այս և այն հարցը քննելու համար իրաւունք ունի ընտրել իր միջից յանձնաժողով։

Յօդուած հինգերորդ։ Ընկերութեան նախագահը իրաւունք ունի տարին մի անգամ գումարել ընդհանուր ժողովը, որ կարող է գումարվել միայն այն ժամանակ երբ ինքը նախագահը ներկայ է գտնվում ժողովին, քանի որ ինքն է ներկայացնում ընդհանուր ժողովը։

Յօդուած վեցերորդ։ Մի և նոյն անձն ընկերութեան ընդհանուր ժողով է, նախագահ է, քարտուղար է, գանձապահ է, յանձնաժողով է և մանաժողով է։

Յօդուած եօթերորդ։ Եթէ մի և նոյն անձի մէջ ամփոփված են երկու, երեք այլ և այլ ընկերութիւններ, այդ բոլոր ընկերութիւնների տարեկան

## ՖԵԼԻԵՏՕՆ

Երկար լռութեանս պատճառները։—Լուրերից բաղկացած ֆելիետոնի փորձը։—Երկաթուղու գիծը։—Հայ-աւետարանականներ։— Հրապարակական դասախօսութիւններ։—Մի բժշկական նոր գիրք։—Մի ուսումնական արշաւանք։—Գիւղատնտեսական ընկերութիւնը։—Հայոց ընկերութիւններ և ընկերութիւնների համար մի նոր կանոնադրութիւն։—Թատրոն և բանկ։—Մի ուրախալի և հրնարաւոր լուր։—Ձեռնածու պ. Բօլէրա Լէնցի ներկայացման պրոգրամը։—Պ. Երիցեանի դասախօսութիւնը։—Զատիկ օրը։

—

Քանի, քանի ժամանակ է արդէն որ «Մշակի» ընթերցողը կարդացած չէ Ասիացու ֆելիետօնը։ Ինչ էր անում Ասիացին այս ամբողջ ժամանակ, ինչի չէր գրում,—աւելորդ է բացատրել։ Միթէ մի և նոյն չէ ընթերցողի համար թէ ինչ պատճառներ էին ստիպում ինձ լուռ մնալ.... Գուցէ բացակայ էի քաղաքից, գուցէ ուրիշ գործերով զբաղված էի, գուցէ հիւանդ էի, գուցէ ֆելիետոնի համար նիւթ չէի գտնում,—այդ մի և նոյն է։

Բայց ապացոյց որ մեռած չեմ, այն է, որ կըրկին գրում եմ։

Միայն իմ այսօրվայ ֆելիետոնս նման չի լինի իմ անցեալ ֆելիետոններից ոչ մինին։ Ես այսօր կամենում եմ փորձ փորձել գրել մի ֆելիետօն, որ ամբողջութեամբ բաղկացած լիներ միմիանցից անկապ լուրերից։ Այդ լուրերը ինձ մասնաւորապէս հաղորդված լուրերն են, որ ես քաղել եմ կամ ինձ անձնապէս պատմածներից, կամ ինձ անձամբ գրած մասնաւոր նամակներից։

Ուրեմն այն լուրերը, որ ընթերցողը կը կարդայ այստեղ, նա երբէք չէր կարող գտնել ոչ մի լրագրում։

* *

Ինձ գրում են Շուշուց որ այդտեղի հարուստ Կ-եանց եղբայրները դիտաւորութիւն ունեն իրանց հաշուով կառուցանել մի երկաթուղու գիծ Շուշի քաղաքից մինչև Փիր գիւղը։ Այդ երկաթուղու գիծը անցնելու է Ասիացու ծննդեան գիւղի մօտից։ Ասիացին ուրախ է որ գիւղը կը ունենայ երկաթուղի, ինչպէս ունեցան Գանձակ, Ղազախ, Ալեքսանդրապոլ, Ղարաքիլիսա, Էջմիածին, Նախիջևան, Ջուլֆա, Թաւրիզ, Սալմաստ, Ուրմիա, Սարդարապատ, Երևան, Ալաշկերտ, Դարալագեազ, Մանդալի, Ղարաբուրուն, Ղարաբուլաղ, Ղարաբաղ, Ղարաբաղլար, Ղարաբուրուն, Ղարաբուրուն, Ղարաբուրուն

սին անմիջապէս խնդիրը ներկայացրեց վարչութեանը և բաղդաւորաբար նրա սկզբնական դիտաւորութիւնը չիրագործվեցաւ։»

—

Մեզ խնդրում են յայտնել որ շուտով մի քանի հայ թատրոնասէրներ, քաղաքիս հայ լուսաւորիչներից պատկանողներից, տալու են Թիֆլիսի թատրոնում մի ներկայացում յօգուտ կանանց Բարեգործական նոր կազմված ընկերութեան։ Կը խաղան Սունդուկեանցի «Քանդած Օջախ» պիէսան։ Ներկայացմանը կը մասնակցեն տիկիններ, Խատիսեան, Թամամշեան, Խոսրովեան, իշխանուհի Բէհբութեան, Մելիքեան, Եւանգուլեան, օրիորդներ՝ Օրբելի, Յովհաննիսեան և պարոններ՝ Քիշմիշեան, Խալաթեան, Մելիք-Բէգլարեան, Էլիոզով, Յարոյ և այլն։

—

Մի երիտասարդ խնդրում է մեզ յայտնել ի գիտութիւն մեր թարգմանիչների որ արդէն ձեռնարկել է թարգմանելու հայերէն լեզուով Օստրովսկու «Воспитанница» կոմէդիան։

—

«Մշակի» ներկայ համարում տպում ենք Բաքուի «Մարդասիրական» ընկերութեան խորհրդի հրաւէրը դէպի հայոց հասարակութիւնը, օգնել յիշեալ ընկերութեանը նուիրատուութիւններով։ Կատարելապէս համակրելով Բաքուի ընկերութեանը, մեր կողմից էլ հրաւիրում ենք հայոց հասարակութիւնը նիւթապէս օգնել յիշեալ ընկերութեանը, մինչև ինքներս ցաւում ենք որ ժամանակի պակասութեան պատճառով չենք կարող խմբագրութեան մէջ ընդունել նուիրատուութիւններ յօգուտ «Մարդասիրական» ընկերութեան։

—

Մեզ խնդրում են յայտնել, որ այսօր ապրիլի 1-ին արհեստաւորների կլուբում կը լինի մանկական պարահանդէս։ Սկիզբն է 8 ժամին։

## ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ԱՆԳԼԻԱ

—

Անգլիական համայնքների ժողովը Գլադստոնի առաջարկութեան համեմատ վերաքննում է իր կանոնադրութիւնը, գրում է „Голосъ“։ Այդպիսի հարցերի քննութեան ժամանակ անգլիական ժողովրդի ներկայացուցիչները չեն շտապում և աշխատում են այնպէս գործել, որ նրա վճռելուց յետոյ ոչ ոք իրաւունք չունենայ ասել, թէ հարցը վճռված է անզգուշութեամբ, առանց ուշադրութիւն դարձնելու նրանց շահերին, որոնց վերաբերում է առաջարկված վերանորոգութիւնը։ Այս անգամ վիճաբանութիւնները բարձրացրին և այն հարցը, թէ արդեօք պարլամենտական կանոնադրութեան քուէարկութեանը չը պէտք է մասնակցեն իրլանդական երեք պատգամաւորները, որոնք կալանաւորված են իրանց հայրենակիցներին կառավարութեան դէմ զրգռելու համար։ Ինչպէս հարկաւոր էր սպասել, Գլադստոն յայտնեց, որ անկարելի է մասնակից անել այդ քուէարկութեանը Պարնելին, Դիլլօնին և Օկելլիին։ Այդ դէպքը անսպասելի կերպով իրլանդական հարցը հերթական դարձրեց և ստիպեց իրլանդական գործերի մինիստր Ֆօրստերին մասնակցել վիճաբանութիւններին։

Պ. Ֆօրստեր եռանդով յարձակվեց Պարնելի կուսակիցների գործողութիւնների վրա և նրանց „Իրլանդիայի համար ամօթալի“ անուանեց։ Նա խոստովանեց, որ կառավարութեան գործադրած խիստ միջոցները իրլանդացի խռովարարների դէմ ցանկալի աջողութիւնը չունեցան, բայց աւելացրեց, որ այդ անաջողութեան համար մեղաւոր էին բացառապէս Պարնելի կուսակիցները։ Ֆօրստեր ասաց, որ հարկաւոր դէպքում կառավարութիւնը և պարլամենտը աւելի խիստ միջոցների կը դիմեն։ Իրլանդական գործերի մինիստրի այդ խօսքերը պարլամենտը ոգևորված հաւանութեամբ ընդունեց։

Ֆօրստերի յայտնութիւններից պարզ երևում է, որ իրլանդական հարցը մինչև այժմ չէ կորցրել իր սուր բնաւորութիւնը։ Այդ հանդամանքը ապացուցանում են և վերջին լուրերը Իրլանդիայից, մանաւանդ այն տեղեկութիւնը, որ հաղորդում է Դիլնամիտով Էլլսօնի քաղաքային խորհրդարանի տան քանդելը։ Իրլանդական յեղափոխականների կռիւը կառավարութեան հետ ոչ թէ միայն շարունակվում է, այլ մինչև անդամ ընդարձակ չափեր է ստանում։ Գլադստոնի մինիստրութիւնը հանդիպել է այնպիսի մի շարժման, որի դէմ միատեսակ անզօր են ինչպէս խիստ, նոյնպէս և հաշտեցնող միջոցները։ Եթէ այդ շարժումը ներկայումս առաջվայ պէս կալուածական բնաւորութիւն չունի, որ նրան յատուկ էր կալուածական օրէնքների մոցնելուց առաջ, այժմ նրա մէջ նկատվում է անհաշտ թշնամութիւն դէպի անգլիացիները։

Շատ դժուար է մաքառել այդ ատելութեան դէմ միայն ստիպողական միջոցներով, բայց մի և նոյն ժամանակ ընդդիմադրութեան այլ միջոցներ էլ չեն մնացել։ Որքան էլ ընդարձակ լինեն մասնաւոր դիջումները, նրանք չեն բաւականացնի այն մարդկանց, որոնք աշխատում են Իրլանդիայի ինքնավարութեան համար, ուրիշ խօսքերով, որոնք կամենում են ունենալ սեփական իրլանդական պարլամենտ։ Քանի որ Պարնել իրլանդական ազգաբնակութեան մէջ շատ կուսակիցներ կունենայ, Իրլանդիայի այժմեան դրութիւնը անփոփոխ կը մնայ։

Այդպիսի կուսակիցների թիւը կարելի է պակասեցնել յաջորդաբար, ճշդութեամբ իրագործելով օրէնսդրական այնպիսի վերանորոգութիւններ, որոնք կապացուցանեն իրլանդական ազգաբնակութեան երկրագործ դասերին, թէ Իրլանդիայի մէջ բնակվող անգլիացի-կալուածատէրերը նրանց վրա այլևս չեն նայում, ինչպէս նուաճված և ստրկացած ցեղի վրա, որ պարտաւոր է համբերել ամեն տեսակ ճնշում իրան նուաճողի կողմից։ Այնուհետև է, որ Գլադստոնի կառավարութեան իրլանդական քաղաքականութեան նպատակը ճիշդ այդ է և դրանով էլ մեկնվում է Գլադստոնի հակակրութիւնը դէպի այն բացառական իշխանութիւնը, որ անգլիական պարլամենտը տուել է նրան Իրլանդիայի մէջ գործելու համար։ Նոյն նպատակին են ծառայում և Գլադստոնի աշխատանքները համայնքների ժողովի այժմեան կանոնադրութիւնը փոփոխելու համար։ Երբ իրլանդական ամբոխները այլևս միջոց չեն ունենայ արգելք դնել օրէնսդրական հարցերի քննութեանը, նրանք կը կորցնեն իրանց նշանակութիւնը ընտրողների առաջ և այն հեղինակութիւնը, որ նրանք այժմ ունեն Իրլանդայի գիւղացիների մէջ։

### ԹԻՒՐՔԻԱ

—

„Daily News“ իր փետրվար 25-ի թիւոյն մէջ կը հրատարակէ հետևեալ հատուածը։

„Սակէ ժամանակ մը առաջ ծանուցինք թէ Պօլսոյ հայոց Պատրիարքը ստիպուեր է հրաժարական տալ իր պաշտօնէն, իրեն գլխաւոր շարժառիթ ունենալով Բերլինի դաշնագրին 61-դ յօդուածին Դրան կողմանէ անգործադրելի մնացած լինելը։ Այժմ կը տեղեկանանք թէ աշխարհի ամեն մասանց մէջ բնակող հայք հեռագրեր և նամակներ ուղղեր են պատրիարքին թախանձելով որ ետ առնու իր հրաժարական։ Մինչև իսկ սուլթանը հրաման հանել է որ պատրիարքը հաճի շարունակել իր պաշտօն, սակայն Ներսէս սրբազան, իր ժողովուրդի կացութեան բարւոքմանը նկատմամբ յուսոյ նշոյլ չունենալով, ինքնակամ հրաժարվեցաւ։ Ասում են որ շուտով սկսելու է հրատարակվել տասը տարեկան բաժանորդագրութիւն մի նոր հայոց ամենօրեայ թերթ, որ կը հրատարակվի շաբաթը երկու անգամ։ Գուցէ լինի կասեն թէ դա անհնարին է, բայց ես կը պատասխանեմ որ ներկայ դարում ամեն բան հնարաւոր է։ Օրինակ յայտնի է, թէ մինչև այժմ միշտ անհնարին էր համարվում որ ամառ ժամանակ ձիւն դայ, իսկ հայոց օրացոյցը մարգարէանում է թէ այս տարի, յուլիսի 20-ին ձիւն պէտք է դայ։

* * *

Հասատ աղբիւրներից լսում եմ որ երևելի ձեռնածու պ. Բօբէրտ Լէնց տալու է այս օրերս մի մեծ կախարդական ներկայացում, երեք բաժանմունքով, հետևեալ նոր, մինչև այժմ չեղած և բաղմակողմանի պրօգրամայով։

Բաժանմունք առաջին։

1. Այրված տան մոխրից փող շինելու գաղտնիքը։

2. Մսի տակա և կաշու գործարան։

3. Ալիւրի տեղ աւազով մարդկանց կերակրելու հնարը։

4. Հասարակ թղթից թղթադրամ դարձնելու միջոցը։

5. Կախարդական միջոց, որով կարելի է փողով լի մի կասսա յանկարծ դարդակել։

Բաժանմունք երկրորդ։

1. Կախարդական դրիչ, որի օգնութեամբ դրած և տպված բաները ամենևին չեն կարդացվում։

2. Կախարդական ակնոցներ, որոնց օգնութեամբ փակած ծրարի մէջ դրած նամակը հեշտութեամբ կարդացվում է։

Բաժանմունք երրորդ։

1. Իրան մաքուր ցոյց տալու համար պէտք է ուրիշի երեսին ցեխ գցել։

2. Դաղտնիք թէ ինչպէս մի բարձր ուսում ստացած մարդ կարող է ուղածին պէս կրկին դառնալ անկիրթ և կինտա։

3. Կտակներ ջուր դարձնելու արհեստը։

4. Օդից փող բռնելը։

5. Դաղտնիք յօդուածներ և դրքեր գրելու, շարելով միմեանց ետևից բառեր, առանց որ և է իմաստի։

6. Իրան անդադար հակասելու արհեստը։

7. Ամենաշնորհ ինտրիգաներ լարելու արհեստը։

8. Մեծ ռոճիկներ ստանալու արհեստը։

9. Մի անարդարական և հարստահարող մարդու յանկարծակի կերպարանափոխութիւնը ազգի բարերար տիզասի։

Ներկայացման վերջը բոլոր հանդիսականները իրանց գլուխը կը կորցնեն։

Թէև պ. Լէնց գրել է իր աֆիշայի գլխին թէ ներկայացումը լինելու է նոր, մինչև այժմ չեղած պրօգրամայով, բայց, արքան լինձ յայտնի է, մեր մէջն ասած, այդ պրօգրամայի բոլոր նիմէրները վաղուց ծանօթ են արդէն մեր հասարակութեանը և մեր հասարակութենից շատերը կարող են պ. Լէնցից էլ աւելի ճարպիկ կերպով կատարել այդ բոլոր ֆոկուսները։

* * *

Այն դասախօսութիւնների շարքում, որ կարդացվելու են շուտով յօգուտ ուսուցչական ժողովի, անշուշտ պ. Ալէքսանդր Երիցեանի դասախօսութիւնը «Բարեգործութիւնը մեր մէջ» ամենահետաքրքիրը կը լինի։ Պարոնը որպէս պատմաբան և լեզուագէտ անշուշտ կը բաժանի իր դասախօսութիւնը երկու մասի վրա։

Առաջին, պատմական մասի մէջ դասախօսը կը պատմի մանրամասնաբար, սկսած ամենահեռու հնութենից մինչև մեր ժամանակները, ինչպէս հայերի մէջ բոլոր կտակները ջուր են կորվել։ Դասախօսը կը սկսի Նոյ նահապետից, որ իր զաւակներին կտակել է պարկեշտութիւն և հաշտութիւն, երկու յատկութիւններ, որոնք ջուր են կորվել նրանց յաջորդների մէջ, յետոյ հետևելով դարերի ընթացքին կը հասնի վերջապէս տիկին Շիօեվի կտակին, որի 300 հազար դուսարը նոյնպէս ջուր է կորվել պ. պ. Էլմիրզօվի, Թամամշեվի և Ցուլաեվի ձեռքերում։

Իր դասախօսութեան երկրորդ բաժնում պ. Երիցեան, որպէս լեզուագէտ, կը քննի լեզուագիտական տեսակէտից փող բառը։ Ցոյանի է որ լեզուագիտութեան բնական կանոններով տառերը յայտնի և որոշ փոփոխութիւնների են ենթարկվում։ Օրինակ գ տառը փոխվում է շատ անգամ ր տառի։ Այդպիսով հայոց լեզուի մէջ, այդ պատճառով և հայերի կեանքի մէջ, փողը և փորը միանչան հասկացողութիւն ունեն։ Ամբողջ հայոց կեանքը հիմնված է փողի և փորի վրա։ Ցետոյ պ. Երիցեան կապացուցանի որ և մեր հարևան և մեզ ազգական վրաց ազգութեան լեզուի և կեանքի մէջ նշմարելի է նոյն երևոյթը։ Մեր փողը դարձել է նրանց մօտ փուլի, որեմն գ տառը այստեղ փոխվել է լ տառի, որ շատ անգամ պատահում է։ Օրինակի համար քաղաք, քաղաքի և այլն։ Վերջապէս հայոց փոր բառը նման է վրաց պուրի բառին։ Այստեղ հայոց փ տառը կերպարանափոխվել է պ տառի և նոյն իսկ բառի նշանակութիւնը, շատ քիչ է փոխվել։ Վրացերէն լեզուով պուրի նշանակում է հաց, իսկ յայտնի է որ հացը մտնում է փորը, ուրեմն պարզ է որ փոր և պուրի բառերը մի և նոյն ծագումի բառեր են, ունենալով շատ մօտ նշանակութիւն։ Աւելի հեռու գնալով պ. Երիցեան կը հասնի, ինչպէս միշտ, մի որ և է հանճարեղ, համարձակ և անսպասելի եզրակացութեան, օրինակ. որովհետև հացը մտնում է փորի մէջ, այսինքն պուրին մտնում է փորի մէջ,—ուրեմն պարզ է որ վրաց պուրին պէտք է անպատճառ մտնի հայոց փորի մէջ, և այլն։

Վերջապէս դասախօսը իր ատենաբանութեամբ փայլուն կերպով կապացուցանի որ լեզուագիտական ճիշդ հետազօտութիւնները բացատրում են մեզ պատմական իրողութիւններից շատերը, որ անհնարին է բացատրել լեզուագիտութենից դուրս։ Այդպիսով լեզուագիտական ճանապարհով հնարաւոր է բացատրել հայոց կեանքի այն պատմական իրողութիւնը, որ մեզանում կտակների փողը միշտ մտնում է կտակատուների փորը։

* * *

Մեր բոլոր լրագիրները, որոնք հրատարակվեցան Զատիկ օրը, բոլորն էլ նուիրեցին այդ հանդիսաւոր օրվայ նշանակութեանը մի մի յօդուած։ Միայն «Մշակը» որ այդ օրը չը հրատարակվեցաւ, միջոց չունեցաւ ասել իր ընթերցողներին «Քրիստոսը յարութիւն առաւ մեռելներից։»

Այժմ ես օգտւում քաղելով «Մշակի» մէջ լինած առած սիմնակներից, կը ցանկանամ թէ իմ սիրելի ազգին և թէ ամբողջ մարդկութեանը, որ դայ այն տենչացած ժամանակը, երբ «Քրիստոս յարութիւն առաւ մեռելներից» նշանակէր որ «ճշմարտութիւնը յաւիտենական է», «ճշմարտութիւնը երբէք չէ կարող մեռնել», «ճշմարտութիւնը վերջի վերջոյ անպատճառ յարութիւն կառնի։»

Այդ իմ սրտից բղխած, ջերմ ցանկութեամբ վերջացնում եմ ես իմ այսօրվայ ֆելիետօնս։

ԱՍԻՍՅԻ

---

ընդհանուր ժողովները չը պէտք է կայանան մի և նոյն օրը։

Յօդուած ութերորդ և ամեն ընկերութիւնների համար պարտաւորիչ։ Ամեն ընկերութիւն իր գործունէութիւնը վերջացնելու ժամանակ պէտք է նուիրի իր ձեռքում մնացած գումարները Երուսաղէմի վանքին։

* * *

Հասատ աղբիւրներից իմացայ հետևեալը։

Որովհետև Թիֆլիսի հայոց թատրոնական մասնաժողովի նախագահ և Թիֆլիսի քաղաքային կրեդիտական ընկերութեան կառավարիչ մի և նոյն անձն է, և որովհետև այդ վերջին հիմնարկութիւնը գտնվում է գեներալ Տէր-Աստուրովի տանը, այդ պատճառով և հայոց թատրոնական դահլիճը, յարմարութեան համար, շուտով կառուցվելու է նոյն տանը։ Այդ կտնենայ և այն յարմարութիւն որ երկու հիմնարկութիւնների գործերն էլ կարելի կը լինի միացնել. բանկի մէջ ծառայողները լեմի վրա կը ներկայացնեն կենդանի պատկերներ, իսկ դերասանների և դերասանուհիների կօնտրակտները կը ծախվեն Ս. Պետերբուրգի բօրսայի վրա, որպէս բանկի դրաական թերթեր։

* * *

Մի ուրախալի լուր է տարածված Թիֆլիսում։ Ասում են որ շուտով սկսելու է հրատարակվել տասը տարեկան բաժանորդագրութիւն մի նոր հայոց ամենօրեայ թերթ, որ կը հրատարակվի շաբաթը երկու անգամ։ Գուցէ լինի կասեն թէ դա անհնարին է, բայց ես կը պատասխանեմ որ ներկայ դարում ամեն բան հնարաւոր է։ Օրինակ յայտնի է, թէ մինչև այժմ միշտ անհնարին էր համարվում որ ամառ ժամանակ ձիւն դայ, իսկ հայոց օրացոյցը մարգարէանում է թէ այս տարի, յուլիսի 20-ին ձիւն պէտք է դայ։

* * *

Հասատ աղբիւրից լսում եմ որ երևելի ձեռնածու պ. Բօբէրտ Լէնց տալու է այս օրերս մի մեծ կախարդական ներկայացում, երեք բաժանմունքով, հետևեալ նոր, մինչև այժմ չեղած և բաղմակողմանի պրօգրամայով։

մը չի տեսնելով, դեռ կը պնդէ իր նախկին որոշմանը վրայ։ Պոլիսէն փետրվար 13 թուականաւ գրող թղթակից մը կըսէ.—„ես կը հաւատամ թէ լորդ Դիւֆերին ամէն կերպով կաշխատի Հայաստանի բարենորոգման խնդրոյն համար, բայց կը վախնամ որ Գերմանիոյ գործողութիւնը կը չէզոքացնէ այժմ իր ձիգերը։“

Նոյն թերթը փետրվար 27-ին կը հրատարակէ հետեւեալ խմբագրական յօդուածը։

„Բ. Դուռը, որ պարտաւոր էր ամէն ճիգ թափել որպէս զի հայերն հաշտեցնէ իր պետութեան հետ՝ Հայաստանի համար երկար ատենէ 'ի վեր խոստացուած բարենորոգումները գործադրելու փափաք ցոյց տալով, կը շարունակէ զայրացուցել ժողովուրդը շարք մը բռնապետական գործերով։ Պատրիարքին դիրքը այնքան անտանելի եղած է որ, ինչպէս գիտեն մեր ընթերցողք, հրաժարական տուաւ և կը մերժէ ետ առնուլ իր հրաժարական։ Մինչև իսկ հայոց ազգային պատմութեան, պատկերներու և երգարաններու վաճառումն արգելուեցաւ և այժմ մի գրածախ, որոյ միակ յանցանքն է հայերէն մի քանի հրատարակութիւններ ծախած լինել, թուրք բանտի մը մէջ մեռնելու վրայ է։ Թիւրք կառավարութիւնը այժմ խաչակրութիւն մը հրատարակած է հայկական վաղեմի եկեղեցւոյն դէմ։ Պոլիս բերել տուած է Մշոյ, Արաբկիրու, Պուրսայի և այլ տեղեաց առաջնորդներն, ոչ թէ ո՛ և է յանցանք գործած լինելնուն համար, այլ վասն զի իրենց հայրենասիրութիւնը կառավարութեան առջև կասկածանաց առարկայ ըրած էր զայնս։ Վերջերս կառավարութիւնը ջանաց Պոլիս բերել տալ Վանայ առաջնորդ Խրիմեան արքեպիսկոպոսը, որոյ մի քանի տարի առաջ յԱնգլիա այցելութիւնը անգլիական ժողովրդեան յիշողութեանը մէջ կենդանի է դեռ։ Բ. Դուռը, հայկական եկեղեցոյ մէջ բաժանումներ ստեղծելու նպատակաւ, ջանացած է գրդել կիլիկիոյ հայոց առաջնորդը որ ինքզինք Պոլսոյ պատրիարքէն անկախ հրատարակէ. և ջնջած կամ խափանած է այն զանազան ընկերութիւնք որք կազմուած էին դրամ հաւաքելու նպատակաւ ի նպաստ հայրենեաց եկեղեցիներուն և դպրոցներուն։ Այն հալածանքներ զոր կը կրէ այժմ հայ ժողովուրդը՝ քաղաքակիրթ աշխարհի համակրանաց կարժանացնէ զայն, այն ճիգերուն մէջ զոր կը թափէ Բերլինի դաշնագրի 61-դ յօդուածին գործադրութիւնն ապահովելու համար։“

---

## ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՅԻՑ

—

Կ. Պոլիս, 15 մարտ 1882

Միացեալ ընկերութեան պարահանդէսը տրուեցաւ և այս տարի իր սովորական չքեղութեամբ և հասոյթը առատ եղաւ, կըսեն, մօտ 25 հազար ֆրանկ։ Պիտի գտնուին անչուշտ հայ լրագրաց թղթակիցներ որք իրենց վայրոյն ոճովն և աքանչացած մտօք պիտի մանրամասնօրէն նկարագրեն այդ հանդէսին պայծառութիւնը և չը պիտի զլանան աւելցուցանել թէ հայն այն դիշերը մեծ վարկ ստացաւ օտարի առաջ։ Մենք ոչ հակամիտութիւն ունինք այսպիսի ուռուցիկ նկարագրութիւններով ժամանակ ընել ուրիշը, այդ պաշտօնը չտեսներուն կը թողունք, ոչ ալ յաւակնութիւն ունինք ռուսիարնակ հայերը չլացնելու, կարծելով որ անոնք այսպիսի պարահանդէսներու երբէք ներկայ չեն գտնուած։

Մենք այն երեկոյին մի բան դիտեցինք. այն է միշտ մի և նոյն խմբակին ժրաջան աշխատութիւնը՝ տոմսակները տեղաւորելու մասին, որ ամէն գովեստի արժանի է անշուշտ։ Կը յուսամք սակայն որ անցեալ տարիներուն մէջ մէկ քանի անձանց զեղծումներն հրապարակ ելնելէ վերջը, այս տարի աւելի փոյթ պիտի ընեն հաշիւները ճշդիւ և արագութեամբ ներկայացնելու մասին։

Ցարուան մէջ մէկ օր մը միայն այդ ընկերութեան անունը օտարի ականջին կը դպնէ, այն ալ գ օ մ ի ն օ ն ե ր ու աղմուկին և դ ե ղ ա ր դ է օ ղ ն ե ր ու պարի ժամանակ. հարկ է ուրեմն որ ընկերութեան վարկը նոյն իսկ հայոց մէջ բարձրանայ, որոց ձեռքն է ընկերութեան կեանքն ու մահը, այդ վարկին անարատութիւնն ալ հաշիւներուն հրատարակութենէն և ճշդութենէն կախեալ է։ Դժբաղդաբար կը տեսնենք որ այդ ընկերութիւնն ալ շատերու նման՝ փոյթ չըներ կանոնաւորապէս և պարբերաբար ներկայացնել իր հաշիւները և տակաւին թոյլ կը տայ մէկ քանի մատանիչ եղած անձանց որ միջնորդ ըլլան նուիրատուներու և ընկերութեան արկղին մէջտեղ։ Բէրա հաւաքուած տակը աւելի զուրին է ուղղակի կալաթա իջեցնել քան թէ Օրթաքէօյէն պատոյցնել ուր մէկ երկու անձինք կը գտնուին որ տակաւին Միացեալ ընկերութեանց հետ ընթացիկ հաշիւի մէջ են։

Մի ուրիշ բան ալ այն գիշերը աչքերուս զարկաւ, այն էր ընդհանրապէս հայ հանդիսականաց ամենավայելուչ և շնորհալի վարմունքը օտարները մեծարելու մասին և եթէ մենք ալ տունէն չբլայինք, անպատճառ պիտի համոզուէինք որ հայ հասարակութեան նման բարեկիրթ և յառաջադէմ ժողովուրդ չի կայ աշխարհս երեսը։ Այն տեղ կարելի էր յայտ յանդիման տեսնել թէ հայը երկու բնութիւն, երկու կերպարանք ունի, ինչպէս Մօլիերի Մէտր-Ժակը։ Մին համեստ, քաղցրաբարոյ, կաց ու նիստը հաշուած, ներողամիտ, էտիկէտի սիրահար. այդ օտարներու առաջ. միւսը կոչտ, չի հանդուրժող, թրքաբարոյ, նախանձոտ և գռեհիկ. այս ալ իրարու մէջ։

Մենք մեր պատուոյն նախանձախնդիր եմք միմիայն այն յայտով որ օտարը լաւ համարում ունենայ մեզ նկատմամբ, հոգ չէ ինչ որ ալ ըլլայ մեր ներքինը։ «Սեր ներս, ճերմակը դուրս» կըսէ հայը և կը կարծէ թէ ասկէ աւելին զզուշութիւն ընելը անօգուտ բան է ազգին արժանապատուութիւնը պահելու համար։ Ամէն ձեռնարկութեանց, ամէն պարագայներու մէջ մեր գլխաւոր ջանքը «երևիլ» է, ոչ թէ «լինել», և այս է ճշմարտապէս մեր տունը քանդողը։ Այն օրն որ մենք միմեանց նկատմամբ պիտի ըլլանք արդարասէր առանց ցեղական կողմնապահութեան, քաղաքավար առանց կեղծաւորութեան և արժանիք ճանաչող առանց մարդահաճութեան կամ անտեղի խստութեան, այն օրն միայն մենք գոած կըլլանք մեր ուղիղ ճանապարհը և ալ պէտք չեմք ունենար յաւուր պատշաճի ոչխարի մորթ զգենուլ։

Քաղաքիս «Courrier d'Orient» ֆրանսերէն լրագրին 12/24 մարտի համարին մէջ հետեւեալը կը կարդանք.

«Յետոսյ դէպքը արժանահաւատ անձէ մը իմացանք, որ առանց դիտաւորութեան կը հրատարակենք, թողլով ընթերցողաց որ դատեն զայն ինչպէս որ արժանի է։

«Պ. Գ. Ն.... որ Ռուսիոյ պահական բանակին մէջ մի հայ սպայ է, մէկ տարիէ աւելի է որ Կ. Պոլիս կը ընակի իբր թղթակից Թիֆլիսի «Մշակ» լրագրի։ Պ. Գ. Ն.... յիշեալ լրագրի մէջ հրատարակած նամակներովն խստութեամբ դատած է մայրաքաղաքիս քանի մը հայ լրագրաց ուղղութիւնը։ Նորա ըրած քննադատութիւնները, մի քանի մեծամեծաց և մանաւանդ Բ. Դրան պաշտօնին մէջ գտնուող հայ էֆէնդիներուն ոմանց նկատմամբ, իր վրայ գրաւեց այդ սուտ հայրենասէր կոչածներուն ուշադրութիւնը։

«Դիւրին է մակաբերել որ Պ. Գ. Ն.... անոնց համակրանաց առարկան չէ եղած, և անշուշտ այսպէսով հարկ է մեկնել թէ ինչ պատճառով մէկ քանի մարդոց հետաքրքրութիւնը իր վրայ հրաւիրեր է։ Այս մարդիկ կը ջանան իր հայրենակիցներէն տեղեկանալ թէ նա ուր կը գտնուի, որ տեղերը կը յաճախէ, որպէս զի, կըսեն, աղաչեն նորա որ բարեխօսէ իրենց վերաբերեալ գործի մը մասին հայոց պատրիարքի մօտ։

«Եթէ մենք այս մանրամասնութիւնները կը հրատարակենք, չէ թէ երիտասարդ սպան զզուշացնելու համար է, որ մեր ազգարարութեանց պէտք չունի անշուշտ, այլ իբր մի իրողութիւն հրատարակութեան արժանի։»

Հետեւեալ օրն «Phare de Bosphore» լրագիրն ալ սա պէս կը խօսէր։

«Երեկի օրն «Courriere d'Orient» կը պատմէր թէ ինչպէս տեսակ մը հակողութեան ենթակայ էր կապիտան Ն.... (մի ռուսիացի սպայ, ազգաւ հայ, որ գեներալ Լազարէվի հետ ռուս-թրքական պատերազմին մասնակցած է և այժմ այստեղէն Ռուսիոյ մեծ լրագրաց թղթակցութեան պաշտօնը կը վարէ)։

«Այդ հակողութիւնը որ կընեն խռուարներ, կամ խռուարի հաղուստը կրող մարդիկ, պէտք է ոստիկանութեան ուշադրութիւնը գրաւէ, որպէս զի կարող ըլլայ իր արդիւնութեամբը եթէ ոչ ցաւալի, գոնէ անհաճոյ տեսարանի մը առաջքը առնուլ։

«Հաճելի է մեզ սակայն մատնել թէ հայոց մէջ չեն որ կը գտնուին այնպիսի անձինք որ կարող են սրիկայ աւազակներ յուզարկել ամէն անոնց մօտ որք ճշմարտութիւնը կը խօսին կամ կը գրեն։

«Ինչ որ ալ է, նոքա որոց վրայ կապիտանը կը կասկածի, մի միջոց ունեն միայն արդարանալու համար, այն է որ իրենք ալ օրէնքն ոստիկանութեան և գտնել տան այն մարդիկը, որք այնքան հետաքրքրութեամբ տեղեկութիւն կուզեն իրեն վրայ։»

Կ. Պոլսոյ մէջ այսպիսի հետաքննութիւններ ստէպ կը պատահին և անհաճոյ եղած անձինք մինչև դերծ չեն այսպիսի մթին դատաքննութիւններու ենթակայ ըլլալէ։

Վերոյիշեալ դէպքը, որ յայտնապէս ձեր աշխատակից պ. Գ. Նիկոդոսեանի կը վերաբերի, բնաւ մեզ չի զարմացուց։ Ճշմարտախօս անձ մը թշնամիներ գոյացուցած ըլլայ, և այդ թշնամիներն կամենան եղեռնագործներու ձեռքով վրէժ առնուլ անկէ, այդ զարմանալի բան մը չէ մանաւանդ Կ. Պոլսոյ նման անիշխանութեան մատնուած քաղաքի մը մէջ։ Մենք ի վաղուց դիտէինք թէ այստեղ թղթակիցներու կացութիւնը խիստ նախանձելի կացութիւն մը չէ, և թէ նոքա անդադար ենթարկուած են ամէն տեսակ հալածանքներու և զրպարտութեանց, միմիայն այն պատճառով որ մարդկային ընկերութեան վնասակար խիզը ցոյց տալով խոշնդոտ կըլլան անոնց խայթելու փափաքին։

Յայտնի է թէ ուրկէ դրդուած են ֆրանսական օրագրաց խօսած կասկածաւոր անձինքը, դժուար չէ անուանել թէ որոնք են այդ տեսակ սրիկայ գործակատարներու դիմաց ստոր արարածները։ Մենք կը զարմանանք միայն այդ մարդոց կարճամտութեամբ որք կը կարծեն թէ ոճրագործութեամբ կարելի է չորացնել ճշմարտութիւնը խօսող լեզուներն արմատները։ Սակայն կը յուսամք թէ այդ նենգամիտ ցոյցերուն անօգուտ ըլլալուն իրենք ալ կը համոզուին և ստակնին չեն վատնիր այլ ևս, կաղախանէ փախած արարածները չտեսնելու համար, որով մենք ալ չենք ստիպուիր երեսն հանել իրենց անունները։

Մ. Վ.

---

## ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Գերմանական կայսրուհի Աւգուստա, զինուորական դեսպանութեան գլխաւորի՝ իշխան Բաճիվիլի ձեռքով ուղարկեց իր պատկերը սուլթանին։ Ի պատասխան նորան ցոյց տուած յարգանքի, սուլթանը կայսրուհուն մէկ գեղեցիկ ալբոմ ընծայեց, որի խուփը շինած է ոսկուց և զարդարված է ադամանդներով և այլ թանդագին քարերով. այդ ալբոմը կազմում է արևելեան գործուածի օրինակելի աշխատանք։ Ալբոմում գրված են սուլթանի և նրա բոլոր ընտանիքի ֆոտոգրաֆիական պատկերները։

* * *

Հռոմի պապը, այս տարի «Ոսկէ վարդը» նշանակեց Ստեֆանիա իշխանուհու, աւստրիական թագաժառանգի Ռուդոլֆի ամուսնու համար։ Այն ժամանակից, երբ Պիոս IX ընծայեց այդ վարդը Իզաբէլլա թագուհուն, առաքինութեան համար այդ ընծայի վինը սաստիկ ընկաւ։

---

## «ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

### ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 25 մարտի։ „Новости“ լրագիրը հաղորդում է, որ ենթադրված է փոփոխել մաքսային տուրքը ալիւրի, բացի կարտոֆէլի ալիւրից, օսլայի, բրինձի, դարեջրի խմորի, մրգերի, պտուղների, մուրբայի, կաթնային տնտեսութեան արդիւնքների և դաստրօնոմիական պիտոյքների։ Այդ փոփոխութենից մաքսային եկամուտը կը շատանայ մօտաւորապէս մէկ միլիոն ռուբլով։ Թագաւոր Կայսրը գովեց մարտի մէկի յիշատակին կառուցանելի տաճարի պրեմիա ստացած նախագիծները, բայց նրանցից ոչ մէկը չը հաստատեց իրագործելու համար։ Կը պատրաստվեն նոր նախագիծներ ռուսաց ոճով։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 26 մարտի։ Նշանակված են. Գիրշ-Գրօսսուալ Բաղուի նահանգապետ, Բօգդէ Սաավրօպոլի փոխնահանգապետ։ Ենթադրված է ոչնչացնել ինժեներների բաժնի Ֆելդցէյխմեստերի և գլխաւորցեսչի օգնականների պարապ պաշտօնները։ Ասպասում են, որ Կայսրուհի Մարիայի բաժինը կը միացնվի ծողովրդական լուսաւորութեան մինիստրութեան հետ։ Վճռված է միաւորել Սեմիրեչիի և Արևմտեան Սիբիրի վարչութիւնները։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 27 մարտի։ „Правит. Вѣстн.“ լրագիրը հաղորդում է, որ Ջատկի համար պալատի մէջ պաշտօնական ընդունելութիւններ չեն նշանակված։ „Московскій Телеграфъ“ լրագիրը դադարեցրած է չորս ամսով։ Ս. Պետերբուրգի լրագիրները մարտի 27-ից հաղորդում են. հիմնվում է նոր գլխաւոր-նահանգապետութիւն՝ Սատպնօե, որ կը կազմվի հետեւեալ նահանգներից. Սեմիրեչենսկայա, Սեմիպալատինսկայա և Ակմոլինսկայա։ Այդ նոր բաժնի գլխաւոր-նահանգապետ կը նշանակվի Կօլպակովսկի։ Տուրկեստանի գլխաւոր-նահանգապետ նշանակվում է գեներալ Չերնաեւ։ Ապրիլի 8-ին կը կայանայ հրէական հասարակութիւնների ներկայացուցիչների ժողովի առաջին նիստը։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 28 մարտի։ „Правит. Вѣстн.“ լրագիրը հաղորդում է, որ, 'ի նկատի առնելով հրէական անկարգութիւնների մասին ստացուած լուրերը, յիշեալ լրագրի մէջ կը տպվեն զեկուցումներ բոլոր այդպիսի անկարգութիւնների մասին։ Ծաղկազարդի կիրակի օրը Անանեվսկի գաւառի մէջ կողոպտեցին հրէական կայքեր։ 30 մարդ կալանաւորված են։ Օրուչսկի գաւառի մէջ գինետանը կոիւ պատահեց քրիստոնեաների և հրէաների մէջ։ 14 մարդ կալանաւորված են։ Արտաքին գործերի մինիստր իշխան Գորչակով հիւանդութեան պատճառով արձակվում է պաշտօնից։ Նրա տեղ նշանակվում է Գիրս։ Ծովապետ Բուտակով Պետական խորհրդի անդամ է նշանակվում։ Գեներալ-մայոր Չերնիաեվ ստացաւ գեներալ-լէյտենանտի աստիճան։ Պէտեր Իոնովիչ Գուբօնինին շնորհված է սուրբ Վլադիմիրի շքանշանը երկրորդ կարգի։ Ս. Պետերբուրգի օբեր-պոլիցիմէյստեր գեներալ-մայոր Կոզլով նշանակված է ժանդարմների բաժնի շտաբի կառավարիչ, պահպանելով նախկին պաշտօնը։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 30 մարտի։ Պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ 95 ր. 75 կ., երկրորդ 91 ր., երրորդ 91 ր. 25 կ., չորրորդ 91 ր. 12 կ., հինգերորդ 90 ր. 50 կ., ներքին 5% առաջին փոխառութեան տոմսակը արժէ 217 ր. 37 կ., երկրորդ 211 ր. 50 կ., արևելեան առաջին փոխառութեան տոմսակը արժէ 90 ր. 37½ կ., երկրորդ 90 ր. 12 կ., երրորդ 90 ր. 25 կ., ոսկի 8 ր. 12½ կ.։ Ռուսաց 1 բուբլ Լոնդոնի վրա արժէ 24,28 պէնս, Ամստերդամի վրա 122,87 պէնս, ռուսաց 100 ր. Համբուրգի վրա արժէ 206 մարկ 75 պֆ., Փարիզի վրա արժէ 255 ֆրանկ 25 սանտիմ։ Բօրսայի տրամադրութիւնը հանդիստ է։

---

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՎԱՐՇԱՎՍԿԱՅԱ ՊԵԿԱՐՆԻԱ

### ՍՕԼՕԼԱԿՈՒՄ

Պատիւ ունեմ յայտնել Թիֆլիսի մեծապատիւ հասարակութեան, որ առաջիկայ Զատկի ծոմի համար ընդունում եմ պատուէրներ պասքի, կուլիչի, պօլկի մազուրկայի, տօրտի և ամենայն տօնին յարմար բաների. վստահ լինելով իմ նոր բերել տված վարպետներիս հմտութեան վրա ամեն վրստահութեամբ դիմում եմ մեծ. հասարակութեան որ չը զլանան դիմելու մեզ իրենց պատուէրով։

Մ. Հախնազարեանց

---

**ՄՈՒՐԱԲԱ**, շաքարի ձուաներ, պանիր-չեստեր, խաւիար և այլն։ Ծախվում են շատ էժան

### ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՋ

Նոյն տեղ ծախվում են. բազկամոռմահճակալ 8 ր., ամբողջ **ՀԱԳՈՒՍՏ** 12 ր., չը թրջող վերարկուներ 6—18 ր. և մեծ քանակութեամբ **ՐԷՎՕԼՎԵՐՆԵՐ**, դանակներ և այլն։

2—10

---

### ՔԻՄԻԱԿԱՆ ՆԵՐԿ

Ամենառնվազս, բոլոր գոյների հետ գործածութեան եղանակը։ Պրովանսեան Զէթ ֆունտը 60 կ., և տուալէտի նոր պատկանելիքներ։ ԳՐԻՎՆԱԿ, Լոնդոն Հիւրանոցի տակ։

5—5

---

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ ԲԱՖՖԻ

### ԴԱՒԻԹ ԲԷԿԻ

III ԳԻՐՔԸ

Բաղկացած է 563 երեսներից

ԳԻՆՆ Է 2 ՌՈՒԲԼ

Վէպի այս հատորի մենավաճառութիւնը պատկանում է բացառապէս Թիֆլիսի «ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌՆՈՑԻՆ»։ Օտարաքաղաքացիք կարող են դիմել այս հասցէով.

„ЦЕНТРАЛЬНАЯ КНИЖНАЯ ТОРГОВЛЯ“ (на Головинскомъ проспектѣ въ д. Мириманова, №№ 3 и 4).

ВЪ ТИФЛИСѢ

3—10

---

Պատիւ ունեմ յայտնել որ իմ նոր բացած ՖԱԲՐԻԿԱՅՈՒՄ լաւ ԾԽԱԽՈՏԻ սիրողները և գործածողները կը գտնեն

ԸՆՏԻՐ ԾԽԱԽՈՏ ԵՒ ՊԱՊԻՐՈՍՆԵՐ

Մաքուր Թիւրքայ, ամենալաւ տեսակների ծխախոտից, առանց որ և է խառնուրդի։ Ես երաշխաւոր եմ որ իմ պատրաստած ծխախոտը կարող է բաւականացնել ամենաընտիր ճաշակին։ Ծխախոտի գինը, ֆունտը 3 ռուբլուց մինչև 10 ռուբլի, իսկ պապիրոսների 100 հատը սկսած 1 ռուբլուց, մինչև 3 ռուբլի։

Գործարանս գտնվում է 3-որդ բաժնում Հեռագրական կայարանի մօտ, իսկ մագազինս Արծրունու գալլերէում, Դվորցովի փողոցի վրա, № 3.

Պարտք եմ համարում այն էլ աւելացնել որ իմ ֆաբրիկայի արդիւնաբերութիւնները կը ծախվեն միմիայն իմ մագազինում։

Գործարանատէր ՇԱՀԻՆՆԵԱՆՑ

14—25

---

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ յայտնում է, որ Թիֆլիսի քաղաքային հասարակութենից 750,000 ր. օրլիգացիաներ հրատարակելու մասին Ֆինանսների մինիստրից 1881 թ. ապրիլի 20-ին հաստատած կանոնների 11 յօդուածի հիման վրա, ներկայ 1882 թուականի ապրիլի 1-ին առաւօտեան 12 ժամին Թիֆլիսի քաղաքային դումայի դահլիճում քաղաքային վարչութեան ներկայութեամբ հրապարակապէս կը կատարվի քաղաքային օրլիգացիաների հանդէսման տիրաժը 15,300 ռուբլ դումարի։ 3—3

---

### ՄԵԾ ՎԱՃԱՌՈՒՄ'Ն

### ՄԻՆՉԵՒ ԱՄՍՎԱՅ ՎԵՐՋԸ

ՄԱՏԻՏՆԵՐ 8 կ. դիւժինը, ԾՐԱՐՆԵՐ 3 կ. հարիւրը, սապօն 3 կ. հատը, արևի ԺԱՄԱՑՈՑՑՆԵՐ 50 կ., ՇՂԹԱՆԵՐ (նոր ոսկուց) ժամացոյցի համար 50 կ., կրաններ 10 կ., ջրի ամաններ 30 կ., կժեր 25 կ., կախարաններ 4 կ., ՖԻԼՏՐԱՆԵՐ 3 ր., ԾԸԾԻՆԵՐ 1 ր., հայելիներ 35 կ., վարտիքներ 4 ր., պիջակներ 6 ր., ԱՄԲՈՂՋ ՀԱԳՈՒՍՏ 13 ր., գլխարկներ 1 ր., չը թրջվող վերարկուներ 6 ր., շչէօտկա 90 կ., ԱՍԵՂՆԵՐ 100 հատը 8 կ., կանանց և տղամարդկանց ԳՈՒԼԲԱՆԵՐ 2 ր. 50 կ. դիւժինը, ՄԵՂՐԱՄԱՄ 32 կ. անգլիական ֆունտը, կանֆետներ 40 կ. ֆունտը, ԴՐԱՊ, արիկո, ԱԼԲՕՄՆԵՐ, բրիտանական մետալի առարկաներ և այլն ԿԻՍԱԳՆՈՎ, մոմեր, մուրաբա և այլն շատ էժան։

**ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹՈՒՄ**

ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳԱԼԼԷՐԷՅ։

6—50

---

Въ Редакціи газеты

«МШАКЪ»

Продается

„ЭКОНОМИЧЕСКОЕ ПОЛОЖЕНІЕ ТУРЕЦКИХЪ АРМЯНЪ.“

Д. Григорія АРЦРУНИ.

Брошюра напечатана въ Москвѣ.

Цѣна 25 коп.

---

ԵՐՕՊԱԿԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՊԱՀԵՍՏՈՒՄ

ВЪ СКЛАДѢ ЕВРОПЕЙСКИХЪ ТОВАРОВЪ

Անժրունու գալլերէում № 144 ԾԱԽՎՈՒՄ է արժան գնելով վիճակագրի

Տօնական Ֆաբրիկայի ամեն տեսակ ՄԵՏՕՐԷՅ, նոյնպէս խոհանոցի բաներ, ՀԱՑԵԼԻՆԵՐԸ և ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ։

10—60

---

Ա. Ս. ԾՈՒՐԻՆՕՎԻ և ընկերութեան դեղական պահեստը պատիւ ունի յայտնել, որ այսուհետև առևտուրը կը կատարվի հետևեալ ֆիրմայով. **ԴԵՂԱՏԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱՌԵՒՏՐԻ ԿՈՎԿԱՍԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ** («КАВКАЗСКОЕ ТОВАРИЩЕСТВО ТОРГОВЛИ АПТЕКАРСКИМИ ТОВАРАМИ“), որի կանոնագրութիւնը ԲԱՐՁՐԱԳՈՑՆ հաստատված է ներկայ 1882 թ. յունվարի 29-ին։ Ընկերութեան պահեստը գտնվում է Խիտարովի տանը, Թանգարանի դէմ։

6—7 (եր. և ուր.)

---

### ԿՈՆՍԻՍՏՈՐԻԱՅՆ

Հայոց վրաստանի և Իմերէթի ծանուցանէ, թէ նրա ատենումը նշանակած է ամուրդ 5-ին ապրիլի ներկայ տարվայ և կրկնամուրդ 6-ին նոյն ամսի, կապալաւ տալու եկեղեցական գիւղերը, որոնք գտնվում են Ախալքալաքի գաւառում Թիֆլիսի նահանգի։ Պայմանները ցանկացողք կարող են տեսնել կոնսիստորիայի դիւանատանը ամեն օր, բացի տօներից, առաւօտեան 9-ից մինչև 2 ժամն։

---

**КЁЛЕРСКАЯ УКСУСНАЯ ЭССЕНЦІЯ.**

1—50

---

# ԱՐԾՐՈՒՆՈՒ ԹԱՏՐՕՆՈՒՄ

Պարսկական պալատական արտիստ

## ՐՕԲԵՐՏ ԼԵՆՑ

պատիւ կունենայ Զատկից յետոյ ԱՌԱՋԻՆ ՇԱԲԱԹ ըսկսված մարտի 28-ից մինչև ապրիլի 4-ը տալ ամենայն օր ԿԱԽԱՐԴԱԿԱՆ և ֆիզիկական մեծ ներկայացումներ բոլորովին ՆՈՐ ՊՐՕԳՐԱՄՈՎ։

Պ. ՐՕԲԵՐՏ ԼԵՆՑ, վերջին երկու շաբաթների ընթացքում ներկայացումներ չը տալով, նոր ՍՏԱՑՎԱԾ մի քանի ԳՈՐԾԻՔՆԵՐԻ օգնութեամբ պատրաստեց ԲԱԶՄԱԹԻՒ ՆՈՐ ՓՈՐՁԵՐ, որոնք Ռուսաստանի մէջ ոչքից չեն ցոյց տուած և որոնք ներկայումս ԱՐՏԱՍԱՀՄԱՆՈՒՄ ՄԵԾ ԱՋՈՂՈՒԹԻՒՆ ունեն։

Ներկայացման սկիզբն է երեկոյեան 8 ժամին։

Ներկայացման սկզբին և անտրակների ժամանակ կածէ զինուորական ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆԸ պ. Պարիսէկի առաջնորդութեամբ։

ՏՈՄՍԱԿՆԵՐԸ և մանրամասն պրոգրամները կարելի է ստանալ ԹԱՏՐՕՆԻ ԿԱՍՍԱՅՈՒՄ ամենայն օր առաւօտեան 10 ժամից։

2—2

---

վերականգնեցնող **ՄԱԿ-ՄԱՍՏԵՐ**, մազերը ամրացնող և նրանց **ԲՆԱԿԱՆ ԳՈՅՆԸ** վերադարձնող։ Գինը 2 ր. հիշը, **ՓՈՍՏՈՎ** ուղարկված 2 ր. 49 կոպ. **ԱՆԳԼԻԱԿԱՆ** խանութի մէջ

մի և նոյն տեղը **ԽԻՆԱՅԻ ԻՒՂ**, մազերը ամրացնելու համար, 1 ր. ամանը և վրձին գլխաչափի դէմ, **ՏՈՒԱԼԷՏԻ ՍԱՊՕՆ** և հատուկ ջրեր և այլն

100—100

---

Միջի փողոց, կաթոլիկական փողոցի անկիւն № 13.

Ամենի էժան, քան թէ ուրիշ տեղ ծախվում են. ՎԻԵՆՆԱՅԻ ՄԵԲԵԼ, ամենայն տեսակ, ֆրանսիական և անգլիական երկաթէ ԿՐԱՎԱԹՆԵՐ 8—30 ր., չամադաններ 250—25 ր., սակվոյաժներ 1. 30—12 ր., սուենդուկներ ճանապարհի 6—35 ր., մարաններ (погребцы) 6—25 ր., սամովարներ 60 կ.—1.25 ֆունտը., կուխոնների պղնձէ ամաններ, Գերմանիայի երկաթէ էմալով ամաններ. ուռմի վալնիկներ մրամորնի 38 ր.—75 ր., հրացաններ երկու լուլանի 6—32 ր., ռէվոլվէրներ ամենայն տեսակ 3. 50—30 ր., պատրոններ. (գուլաններ) ռէվոլվերի, սիգար Ռէնդարդի ֆաբրիկից. պապիրոս և թամբաքու կուշնարովի գիլզի պապիրոզի. 5,000 ՖՈՒՆՏ ԹԷՅ (չայ) ԵՎ ՊԱՊՈՎՆԵՐԻ, բիսկվիտ. (սուխար չայու և կաֆէի) էլինէմի. կոֆէ էլինէմի և Միխէլսոնի. Պետերբուրգու 40—1 ր. 25 կ. հայելիներ ամենայն տեսակ 28 կ.—240 ր., պրոբկայ գինէվաճառների, հանքային և գարեջրի (для зельтерскихъ водъ и пива) ղուլթուկ (пухъ), պաղնոսներ սամովարի և չայու, դանակ չանդալ զանազան ֆաբրիկաների 1 ր. 20 կ.—25 ր. դուժինը. գրչակոմներ 1 ր. 80 կ.—5—60 կ. դանակ ջիբի 1—60 կ.—12 ր., դանակ հացի 20 կ.—1 ր., հատը, կուխոնի 1—40 մինչև 3—20 կ. պրիբոր. միս կարելու մաշինայ. Անգլիական ուլթոներ, բրիտանկի չայնիկներ, կաֆէնիկներ ամենայն տեսակ, ջաղացներ կաֆէի համար, ֆիլտեր—ջուր մաքրելու, կրախմալ կարօբկէն 18 կ., վաքս ֆրանսիայի ժակոյ, թուղթ փոշտի, կանվերտներ, սուրգուչ, մատիա, զրիչ երկաթէ, զրչակոթ, քարետախտակ, թանաք, թանաքամաններ, պրեսպապիեներ, գդալներ սեղանի և չայու ֆրաժէ, վարշավի և բրիտանկի դուժինը 1—50 կ. մինչև 12 ր., և չայու 45 կ.—5 ր., չուտիչկէք 45 կ.—5 ր., շամադաններ ամեն տեսակ 25 կ.—12 ր. ջուխտ, պղսապոշկաններ վարշավու, ՌԵԶԻՆԻ ԿԱԼՕՇՆԵՐ, ամեն տեսակ, գուլբաններ կանանց և մարդկերանց 15 կ.—50 կ. ջուխտ, շապիկներ, մարդկերանց գալուստիկներ, զոնտիկներ 35 կ.—4—50 կ., հատ, անձրևի և շոքի. սանդրեր շերմայու ոսկորէ, գուտապերչովի և փայտէ, շչոտկաներ գլխի, շորի, սապոնի, պոլի և կարտի համար. չուլքի թէլ (бумага) մատոկի կոճի և շալէ (гарусъ) ֆելչատկէք մարդկերանց և կանանց, պորտմաններ, քիսաներ, պապիրոսի ամաններ և մանր գողանտերեյնի ապրանքներ, սապոն ամեն տեսակ 3 կ.,—30 կ., կոտր, հոտավէտ ջրեր, պուդրա, Գլիցերին ջրի քացախ, հոտավէտ պարաշոկներ ԿԻԼԵՐԻ ԼԱԲՕՐԱՏՈՐԻՑ. և այն և այն և այն։

Վաճառականներին առանձին պայմաններով և զիջումով վերոյիշեալ ապրանքներ մեծ քանակութեամբ միշտ գտնվում են ՄԻՔԱՅԵԼ ՏԷՐ ՆԻԿՈՂՈՍԵԱՆՑԻ պահեստում (въ складѣ) միջի փողոցում կաթոլիկաց փողոցի անկիւնում № 13.

Օտարաքաղաքացիք կարող են դիմել հետևեալ հասցէով. Тифлисъ Михаилу Н. Теръ-Никогосову.

20—180

Միջի փողոց, կաթոլիկական փողոցի անկիւն № 13.

Дозволено цензурою, Тифлисъ, 31 Марта 1882 года.

Типогр. Главн. Упр. Главноначальств. гражд. час. на Кавк., Лор.-Мелик. ул., каз. д.